ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ԵՎ ՎԻԶԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, շենք 17/10 հեռ. /010/59-07-38

N 22- 79044 «10» 09 2019թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն
նախագահ Շ.Դոյդոյանին
ք.Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ

Հարգելի տիկին Դոյդոյան,

ՀՀ վարչապետին հասցեագրված 29.08.2019թ. տեղեկատվություն ստանալու թիվ 342-71 հարցումը՝ Էդմոն Հրաչիկի Մարուքյանին 2012թ. ԱԺ ընտրություններին տրամադրված՝ վերջին հինգ տարում ՀՀ-ում մշտապես բնակվելու մասին տեղեկանքի իրավաչափության հետ կապված տեղեկատվություն տրամադրելու մասին, վերահասցեագրվել է ՀՀ ոստիկանություն և քննարկվել անձնագրային և վիզաների վարչությունում:

Տեղեկացնում ենք, որ 2012թ. ընտրություններին մասնակցելու համար վերջին հինգ տարում ՀՀ քաղաքացի հանդիսանալու, այլ պետության քաղաքացի չհանդիսանալու և վերջին հինգ տարում ՀՀ-ում մշտապես բնակվելու մասին տեղեկանքը տրամադրվել է բացառապես տվյալ ժամանակատվածում գործող ՀՀ ընտրական օրենսգրքով և «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավական հիմքերով, իսկ փաստական տվյալների և իրավական հիմքերի համապատասխանությունը ստուգվել է ինչպես ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, այնպես էլ տարածքային անձնագրային ծառայությունների կողմից (Է.Մարուքյանին տեղեկանքը տրամադրվել է Վանաձորի անձնագրային ծառայության կողմից): Հարկ է նշել, որ վերը նշված իրավական ակտերից բացի թեկնածուների համար քաղաքացիության և մշտական բնակության վերաբերյալ իրավական դաշտը հստակ կանոնակարգող այլ իրավական ակտեր (այդ թվում՝ վերջին 5 տարում ՀՀ-ում մշտապես բնակվող հասկացությունը սահմանող) չեն եղել:

ՀՀ ոստիկանության պետի 11.07.2007թ. թիվ 55-ԱԳ հրամանով դիմումների, առաջարկությունների, բողոքների և դրանց ընթացք տալու աշխատանքների վերաբերյալ փաստաթղթերի պահպանման համար սահմանված 5 տարի ժամկետն անցնելու հանգամանքով պայմանավորված՝ 2012թ. ՀՀ ԱԺ ընտրություններին պատգամավորի թեկնածու առաջադրվելու տեղեկանք տրամադրելու համար հիմք հանդիսացած փաստաթղթերը ոչնչացվել են, ուստի Ձեր կողմից բարձրացված հարցերին համապատասխան իրավական գնահատական կամ նախկինում տրամադրված տեղեկանքների իրավաչափության վերաբերյալ պարզաբանումներ տրամադրել հնարավոր չէ:

Պետ, ոստիկանության գնդապետ ***Մ.Բիչախչյան***